

Վաղ Խնամքի Եվ Կրթական Ծառայություններ Տրամադրող Հաստատությունների Ուղեցույց

Վերջին Թարմացումները`

12/8/20: Կատարվել է փոփոխություն պարզաբանելու համար` երբ և ինչպես Հանրային Առողջապահության Վարչությանը հաղորդել COVID-19-ով վարակման 1 կամ 2 դեպքերի մասին: Վաղ Խնամքի և Կրթական Ծառայություններ Տրամադրող Հաստատություններից պահանջվում է Հանրային Առողջապահության Վարչությանը հայտնել աշխատակիցների և աշակերտների շրջանում COVID-19-ով վարակման բոլոր հաստատված դեպքերի մասին, որոնք մինչև հիվանդանալը 14 օրերի ընթացքում որևէ ժամանակ գտնվել են հաստատությունում: 1 կամ 2 հաստատված դեպքերի մասին անհրաժեշտ է հայտնել հաղորդագրություն ուղարկելով հետևյալ էլեկտրոնային հասցեին` ACDC-Education@ph.lacounty.gov, մինչդեռ 3 կամ ավելի հաստատված դեպքերի մասին կարելի է հայտնել էլեկտրոնային տարբերակով կամ հեռախոսազանգի միջոցով:

12/3/20: Փաստաթուղթը վերաձևափոխվել է Ցանկի` հեշտացնելու կանխել COVID-19-ի տարածմանն ուղղված պահանջվող և առաջարկվող միջոցառումների իրականացումը: Փաստաթուղթը թարմացվել է, որպեսզի ներառի <<սերտ շփում/ կոնտակտավորներ>> եզրույթի ներկայիս սահմանումը: Փաստաթուղթը թարմացվել է նաև ամրապնդելու համար ընդմիջումների և ճաշելու ժամերին անձնակազմի կողմից դիմակներ կրելուն և ֆիզիկական հեռավորության պահպանմանն ուղղված պահանջները:

Սույն Ուղեցույցը վերաբերում է ընթացիկ պահանջներին, որոնք համահունչ են Առողջապահության Պատասխանատուի Նոյեմբերի 28-ի` Տանն Ավելի Ապահով է ժամանակավոր Հրամանին, որն ուժի մեջ է 2020 թվականի Նոյեմբերի 30-ից մինչև 2020 թվականի Դեկտեմբերի 20-ը: **Թարմացումները և ժամանակային տվյալ սահմանափակումները նշված են դեղին գույնով:**

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը որդեգրել է գիտական և հանրային առողջապահության փորձի վրա հիմնված փուլային մոտեցում` թույլատրելու որոշ հիմնարկների վարել ֆիզիկական շփում ենթադրող գործունեություն COVID-19-ի համաճարակի ընթացքում: Ստորև ներկայացված պահանջները հատուկ են բոլոր ծրագրերին` ներառյալ <<Վաղ Խնամքի և Կրթական Ծառայություններ Տրամադրող Հաստատությունների Ծրագրեր>> (ECE) ծրագրերին: Այդ հաստատություններին թույլ է տրվում բացվել` Նահանգի Առողջապահության Պատասխանատուի Հրամանի համաձայն: Նահանգապետի կողմից տվյալ հատուկ հիմնարկների համար սահմանված պահանջներին զուգահեռ նմանատիպ բիզնես-հիմնարկները պետք է համապատասխանեն նաև այս Ցանկում շարադրված պայմաններին: Այն հիմնարկները, որոնք հավաստագրված են որպես Վաղ Խնամքի և Կրթական Ծառայություններ Տրամադրող հաստատություններ պետք է հետևեն նաև ԼԱ Շրջանի հանրային առողջապահության [ECE ծրագրերի](#) ուղեցույցին:

Խնդրում ենք հաշվի առնել, Սույն փաստաթուղթը կարող է թարմացվել լրացուցիչ տեղեկությունների և աղբյուրների հասանելի դառնալու դեպքում, հետևաբար մի մոռացեք կանոնավոր կերպով ստուգել ԼԱ Շրջանի վեբ կայքը <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/> այս փաստաթղթի թարմացումների մասին իմանալու համար:

Այս Ցանկը ներառում է`

- (1) Աշխատավայրին բնորոշ կանոնադրություն և գործելակերպ աշխատակիցների առողջությունը պաշտպանելու համար



- (2) Ֆիզիկական հեռավորության պահպանմանն ուղղված միջոցառումներ
- (3) Վարակի վերահսկմանն ուղղված միջոցառումներ
- (4) Հաղորդակցությունն աշխատակիցների և հանրության հետ
- (5) Կարևոր ծառայություններին անաչառ հասանելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ

Անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հինգ հիմնական ոլորտներին, եթե ձեր հաստատությունը մշակում է վերաբացման ցանկացած արձանագրություն:

Սույն ուղեցույցում ներառված բոլոր ճրագրերը պետք է իրականացնեն բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու չիրականացված որևէ միջոցառում կիրառելի չէ տվյալ ճրագրի համար:

Ճրագրի Անունը՝

**Հաստատության
Հասցեն՝**

A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻՆ ԲՆՈՐՈՇ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՆՇԵՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ)

- Յուրաքանչյուր անձի, որը կարող է տևից կատարել իր աշխատանքային պարտականությունները, հանձնարարվել է աշխատել տևից:
- Խոցելի անձնակազմին (65 տարեկանից բարձր, քրոնիկ առողջական խնդիրներ ունեցող անձինք) հանձնարարել այնպիսի աշխատանք, որը, հնարավորության դեպքում, կարելի է կատարել տևից:
- Աշխատանքային գործընթացը պետք է վերաձևակերպել այնպես, որ աշխատակիցների համար առավելագույնս հնարավորություն ստեղծվի տևից աշխատելու համար: Աշխատանքային պարտականություններում փոփոխություն պահանջող աշխատակիցների և կամավոր գործունեություն իրականացնող անձնակազմի համար դիտարկեք այնպիսի տարբերակներ, որոնք նվազեցնում են նրանց շփումն այլ անձանց հետ (օր.՝ վարչական պարտականություններ):
- Հնարավորության դեպքում անհրաժեշտ է սահմանել այլընտրանքային, փուլային կամ հերթափոխով գրաֆիկներ՝ առավելագույնի հասցնելու ֆիզիկական հեռավորությունը:
- Բոլոր աշխատակիցներին (ներառյալ՝ վճարվող անձնակազմը և կամավորները, այսուհետ միասին՝ <<աշխատակիցներ>>) պետք է տեղեկացնել, որպեսզի չգան աշխատանքի, եթե հիվանդ են կամ շփվել են COVID-19-ով վարակված անձի հետ: Աշխատակիցներին անհրաժեշտ է տեղեկացնել Առողջապահության Պատասխանատուի ներկայիս Հրամանի դրույթների մասին, որոնք վերաբերում են աշխատանքից դուրս հավաքների սահմանափակմանը և ճամփորդություններից խուսափելուն, ինչպես նաև Նահանգի պահանջին, որը վերաբերում է երկու շաբաթ կարանտին պահպանելուն, եթե գնացել եք Նահանգից դուրս ճամփորդության (ավելացնել հղումը): Աշխատակիցները պետք է գիտակցաբար հետևեն Հանրային Առողջապահության Վարչության (DPH) ինքնամեկուսացման և կարանտին պահպանելու ուղեցույցին, եթե կիրառելի է: Աշխատանքից բացակայելու կանոնադրությունները պետք է վերանայվեն և փոփոխվեն՝ ապահովելու, որ աշխատակիցները չտուգանվեն հիվանդության պատճառով տանը մնալու համար:
- Տեղեկանալով այն մասին, որ մեկ կամ մեկից ավել աշխատակիցների թեստի պատասխանը դրական է, գործատուն պետք է տեղում ունենա ծրագիր կամ արձանագրություն, որպեսզի ապահովի վարակված անձի (անձանց) մեկուսացումը տանը և պահանջի անմիջապես կարանտին պահպանել այն



աշխատակիցներից, որոնք աշխատավայրում շփվել են վարակված անձի (անձանց) հետ: Եթե COVID-19-ի վարակի հետ շփումը տեղի է ունեցել դասասենյակում կամ հաստատության ներսում գործող խմբերից մեկի շրջանակում, ապա վարակի ի հայտ գալու ժամանակահատվածում դասասենյակում գտնվող կամ խմբի մեջ ընդգրկված բոլոր անձանց պետք է կարգադրել կարանտին պահպանել: Գործատուի ծրագիրը պետք է ներառի արձանագրություն կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցների համար, որպեսզի նրանց համար հասանելի լինի կամ նրանց կարողանան COVID-19-ի թեստ հանձնել՝ պարզելու՝ արդյոք աշխատավայրում եղել են վարակի հետ շփման հավելյալ դեպքեր, ինչն էլ իր հերթին կպահանջի COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումների իրականացում:

- ❑ Մինչև աշխատակիցների կողմից աշխատավայր մուտք գործելը պետք է կատարվի աշխատակիցների ախտանիշների ստուգում: Հաստատությունը պետք է հետևի Հանրային Առողջապահության Վարչության (DPH) [Որոշումների](#) ուղեցույցին այն անձանց համար, որոնք նախքան կրթական հաստատություն մուտք գործելը կամ հաստատությունում գտնվելու ընթացքում ունենում են ախտանիշների դրական պատասխան: Ստուգումը պետք է ներառի մուտք գործելիս հնարավոր COVID-19-ի վարակին համահունչ ախտանիշների ստուգում, որոնք թվարկված են Որոշումներում և՛ արդյոք աշխատակիցը վերջին 14 օրերի ընթացքում շփվել է COVID-19-ով վարակված անձի հետ: Այդ ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ անձնապես՝ աշխատակցի ժամանման պահին: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի նաև ջերմաչափում: Հաստատություններից պահանջվում է Հանրային Առողջապահության Վարչությանը (DPH) հաղորդել հաստատության ներսում աշխատակիցների և երեխաների շրջանում COVID-19-ով վարակման մասին վարակման դեպքի մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ լրացնելով [COVID-19-ով վարակված Անձանց և Նրանց Կոնտակտավորների Ցանկը Կրթական Ոլորտի համար](#): Այն դեպքում, եթե աշխատավայրում 14 օրվա ընթացքում հայտնաբերվում են վարակման 3 կամ ավելի դեպքեր, գործատուն պետք է այդ խմբակային դեպքի մասին անմիջապես հաղորդի Հանրային Առողջապահության Վարչությանը հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ ACDC-Education@ph.lacounty.gov կամ զանգահարելով հետևյալ հեռախոսահամարներով՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821:

❑ ԱՌՈՂՋԱԴԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ COVID-19-Ի ՎԵՐԱՅՍԿՄԱՆ ԶՐԱՄԱՆԻ համաձայն՝ ԿԱՐԳ 1-ԻՆ ՎԱՐԱԿՄԱՆ ԴԵՊԵՐԻ ԿՏՐՈՒԿ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԶԻՄԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԶ, որը հրապարակվել է 2020 թվականի Նոյեմբերի 28-ին, բոլոր աշխատակիցները պետք է ամբողջ օրվա ընթացքում կրեն դիմակներ՝ բացառությամբ անձնական սենյակում, փակ դռների ետևում աշխատելիս կամ ուտելիս կամ խմելիս: Նախկինում կիրառվող բացառությունը, որը վերաբերում էր աշխատակիցների կողմից ամուր պատնեշներով շրջափակված խցերում աշխատելուն, որոնք գերազանցում էին աշխատակցի հասակը կանգնած ժամանակ, չեղարկվում է ժամանակավոր կարգի գործողության ընթացքում՝ 2020 թվականի Նոյեմբերի 30-ից՝ առավոտյան 12:01-ից, մինչև 2020 թվականի Դեկտեմբերի 20-ը՝ երեկոյան 11:59-ը:

- Անձնակազմի այն անդամները, որոնք աշխատում են խուլ կամ լսողության խնդիրներ ունեցող երեխաների հետ, կամ այն երեխաների հետ, որոնք սովորում են կարդալ, սովորում են նոր լեզու, կամ որևէ այլ պատճառով ձայնավոր հնչյունների ճիշտ արտաբերման համար պետք է տեսնեն բերանի պատշաճ շարժումը, կարող են կրել թափանցիկ դիմակներ կամ թափանցիկ պլաստիկ վահանակով դեմքի ծածկոցներ: Դիմակներ կրելու կարգադրությունների համար տե՛ս՝ [ԿտորեԴիմակներիՈւղեցույցը](#):

❑ Ապահովելու համար, որպեսզի դիմակները հետևողականորեն և ճիշտ կիրառվեն, աշխատողներին չի խրախուսվում ուտել և խմել՝ բացառությամբ ընդմիջումների համար նախատեսված ժամերին, և միայն այն դեպքում, եթե նրանք կարող են ապահով կերպով հանել իրենց դիմակները և ֆիզիկապես հեռու գտնվել մյուսներից:

- Ցանկացած տարածքում, որն աշխատակիցների կողմից օգտագործվում է որպես ճաշելու և/կամ ընդմիջումների տարածք, աշխատակիցների միջև տարածությունը պետք է հասցնել առավելագույնի: Ստորև տե՛ս <<Սնունդ>> բաժինը ճաշելու ապահով ժամերի համար:

- ❑ Անձնակազմին և ծնողներին պետք է կարգադրություններ տալ երեխաների կողմից պատշաճ կերպով դիմակներ կրելու վերաբերյալ՝ ինչպես նշված է ստորև՝
 - Նորածին երեխաները և մինչև 24 ամսական երեխաները չպետք է կրեն դիմակ:



- 24 ամսականից 8 տարեկան երեխաները պետք է կրեն դիմակներ մեծահասակների հսկողության ներքո, որպեսզի մեծահասակները հսկեն, որ երեխան անվտանգ կերպով շնչի և խուսափի խեղդվելուց կամ շնչահեղձ լինելուց:
- Շնչառական ինդիկատորները ունեցող երեխաները չպետք է կրեն դիմակներ:
- Այլ անձանց հետ շփում ունեցող աշխատակիցներին պետք է անվճար առաջարկել համապատասխան դիմակ, որը ծածկում է քիթը և բերանը: Աշխատակիցը պետք է կրի դիմակն աշխատանքային օրվա ամբողջ ընթացքում, երբ շփվում է կամ հավանական է, որ շփում ունենա այլ անձանց հետ: Այն աշխատակիցները, որոնց իրենց բժիշկը կարգադրել է չկրել դիմակ, պետք է կրեն դեմքի վահան՝ ստորին եզրին ամրացված կտորով, որպեսզի համապատասխանի Նահանգի հրահանգներին, քանի դեռ նրանց առողջական վիճակը թույլ է տալիս դա: Նախընտրելի է կզակը ծածկող կտորով դեմքի վահանը: Միակողմանի փականներով դիմակներ չպետք է օգտագործվեն: Աշխատակիցներից չի պահանջվում կրել դիմակ, եթե նրանք միայնակ գտնվում են իրենց սենյակում կամ ամուր պատնեշներով շրջափակված խցում, որի բարձրությունը գերազանցում է աշխատակցի հասակը կանգնած ժամանակ:
- Աշխատակիցներին պետք է կարգադրել ամեն օր լվանալ կամ փոխել իրենց դիմակները:
- Աշխատակիցներին անհրաժեշտ է տրամադրել ձեռնոցներ, որոնք պետք է օգտագործվեն այնպիսի առաջադրանքների համար ինչպիսիք են՝ սնունդ մատուցելը, աղբը տեղափոխելը կամ մաքրող և ախտահանող արտադրանքներ օգտագործելը
- Աշխատակիցներին պետք է կարգադրել հաստատության բոլոր վայրերում, հնարավորության դեպքում, պահպանել առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորություն այցելուներից և միմյանցից: Աշխատակիցները կարող են մոտենալ երեխաներին նրանց աջակցելու, կամ ըստ անհրաժեշտության այլ դեպքերում:
- Չուզարանները և ընդհանուր օգտագործման այլ վայրերը պետք է հաճախ ախտահանվեն հետևյալ ժամանակացույցով՝
 - Չուզարաններ _____
 - Այլ _____
- Ախտահանիչները և նմանատիպ միջոցները պետք է հասանելի լինեն աշխատակիցների համար հետևյալ տեղանք(ներ)ում՝ _____
- COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանիչ միջոցները պետք է հասանելի լինեն բոլոր աշխատակիցների համար հետևյալ տեղանք(ներ)ում՝ _____
- Աշխատակիցներին պետք է հիշեցնել հաճախ լվանալ իրենց ձեռքերը:
- Սույն արձանագրության պատճենը պետք է տրամադրվի յուրաքանչյուր աշխատակցի:
- Հնարավորության սահմաններում յուրաքանչյուր աշխատակցի պետք է տրամադրել իրենց անձնական սարքավորումները և հորդորել խուսափել հեռախոսների, պլանշետների, երկկողմանի ռադիոների, այլ աշխատանքային գործիքների կամ գրասենյակային սարքավորումների համատեղ օգտագործումից: Նրանց պետք է նաև կարգադրել երբեք չտրամադրել ուրիշներին իրենց անձնական պաշտպանիչ միջոցները (PPE):
- Այն դեպքում, եթե առարկաները պետք է համատեղ օգտագործվեն, դրանք պետք է ախտահանվեն մակերեսներ մաքրելու համար անհրաժեշտ միջոցներով հերթափոխների միջև կամ օգտագործելուց առաջ և հետո՝ կախված այն բանից, թե որ մակերեսներն են ավելի հաճախ օգտագործվում, ներառյալ՝ ընդհանուր օգտագործման գրասենյակային սարքավորումները, ինչպիսիք են՝ պատճենահանող սարքերը, ֆաքսի մեքենաները, հեռախոսները, ստեղնաշարերը, դակիչները, կեռ հեռացող միջոցները, նամակներ բացելու սարքերը, ընդունարանի տարածքի մակերեսները, համատեղ օգտագործման աշխատանքային կայանները, աուդիո կամ վիդեո սարքավորումները, ռադիոկայանները (ռացիա) և այլն:
- Աշխատակիցներին անհրաժեշտ է տրամադրել ժամանակ իրենց հերթափոխների ընթացքում մաքրություն անելու համար: Մաքրման առաջադրանքները պետք է հանձնարարվեն աշխատանքային ժամերի ընթացքում՝ որպես աշխատակիցների աշխատանքային պարտականության մաս:



Անհրաժեշտության դեպքում փոփոխեք ժամերը՝ ապահովելու պատշաճ, մանրակրկիտ մաքրում:
Դիտարկեք մաքրում կատարող կազմակերպություններին՝ որպես երրորդ կողմ ներգրավելու հարցը,
որպեսզի նրանք օգնեն մաքրման պահանջի ավելանալու դեպքում:

- Վերահսկեք անձնակազմի բացակայությունները և կազմեք պահուստային աշխատակիցների ցանկ, եթե կան այդպիսիք:
- Սույն Ցանկում ներառված բոլոր ծրագրերը՝ բացառությամբ աշխատանքի ընդունմանը վերաբերող ծրագրերին, վերաբերում են առաքման անձնակազմին և ցանկացած այլ ընկերություններին, որոնք կարող են սովյալ տարածքում հանդես գալ որպես երրորդ կողմ:
- Ընտրովի—Նկարագրեք ուրիշ միջոցառումներ՝

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՅՊԱՆՄԱՆՆ ՈՒՂԴԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԺԱՄԱՆՈՒՄ ԵՎ ՄԵԿՆՈՒՄ

- Հաստատության ներսում անձանց քանակը սահմանափակվում է ֆիզիկական հեռավորություն պահպանելու համար անհրաժեշտ համապատասխան քանակով:
- Եթե ծրագրի կողմից օգտագործվում են փոխադրամիջոցներ (օր. ավտոբուսներ), վարորդները պետք է կատարեն անվտանգության ստուգմանն ուղղված գործողություններ և կիրառեն արձանագրությունները՝ ինչպես սահմանված է մյուս անձնակազմի համար (օր.՝ ձեռքերի հիգիենա, դիմակներ և ֆիզիկական հեռավորություն):
 - Տրանսպորտային միջոցներում ֆիզիկական հեռավորության պահպանումը պետք է կազմակերպվի այնպես, որ ավտոբուսի/ փոխադրամիջոցի մեկ նստատեղին նստի մեկ երեխա կամ նստեն հերթական շարքերով:
 - Տրանսպորտային միջոցներում պատուհանները պետք է բաց պահվեն, եթե եղանակային պայմանները և անվտանգությունը թույլ են տալիս, որպեսզի խթանեն օդափոխությունը:
- 24 ամսականից** բարձր բոլոր երեխաները և բոլոր այցելուները ժամանելիս և մեկնելիս պետք է կրեն դիմակներ:
- Օրվա սկզբին և օրվա ավարտին անձնակազմի անդամների, երեխաների և ընտանիքների միջև շփումը պետք է հասցնել նվազագույնի:
- Երեխաներին իջեցնելը և վերցնելը հնարավորության դեպքում պետք է կազմակերպվի հաստատության մուտքի մոտ՝ սահմանափակելու հաստատություն ըստ անհրաժեշտության մուտք գործող ծնողների կամ այցելուների թիվը:
- Ժամանման և երեխաներին իջեցնելու ժամերը և տեղանքը պետք է դասակարգվեն այնպես, որ հնարավորինս խոչընդոտներ չառաջացնեն ընտանիքների համար:
- Մուտքի և ելքի ուղիները պետք է կազմակերպել հնարավորինս շատ մուտքերով:
 - Ժամանող և մեկնող ընտանիքների միջև անմիջական շփումը հնարավորինս սահմանափակելու համար անհրաժեշտ է կիրառել այլ արձանագրություններ:
- Անհրաժեշտ է կիրառել ֆիզիկական ուղեցույցներ՝ ինչպիսիք են գետնին կամ մայթերին փակցված ժապավենները կամ պատին արված նշանները, որպեսզի ապահովվի, որ անձնակազմի անդամները և երեխաները շարքում կանգնած կամ ուրիշ ժամանակ միմյանցից պահպանեն առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն (օր.՝ նախաարհներում <<միակողմանի ուղիներ>> ստեղծող նշումներ, կամ շարքեր նախատեսող նշումներ երեխաներին իջեցնելու և վերցնելու համար):

ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ

- Երեխաների խնամքի գործողությունները՝ հաստատության ներսում կամ դրսում, պետք է



իրականացվեն հաստատուն խմբերով՝ 12 կամ ավելի քիչ երեխաներով, որպեսզի պահպանվի ֆիզիկական հեռավորություն երեխաների և երեխաների և անձնակազմի միջև (<<հաստատուն>> նշանակում է միևնույն 12 կամ ավելի քիչ երեխաները միևնույն խմբում ամեն օր):

- Զնարավորության դեպքում միևնույն ընտանիքի երեխաները (քույր/եղբայր) պետք է լինեն նույն խմբում:
- Եթե երեխան պետք է հեռանա հաստատությունից հնարավոր վարակման պատճառով կարանտին պահպանելու և/կամ թեստ հանձնելու համար, ապա նրա քույրերը/եղբայրները ևս պետք է լքեն հաստատությունը կարանտին պահպանելու և/կամ թեստ հանձնելու համար:
- Երեխաները չպետք է տեղափոխվեն մի խմբից մյուս խումբ:
- Եթե հաստատության ներսում իրականացվում է երեխաների մեկից ավելի խմբի խնամք, ապա յուրաքանչյուր խումբ պետք է գտնվի առանձին սենյակում:
 - Զաստատության դասասենյակներում, բացօթյա տարածքներում կամ ընդհանուր օգտագործման վայրերում խմբերը չպետք է միախառնվեն:
- Նույն սկզբնական ուսուցիչ(ներ)ը պետք է մնա(ն) երեխաների միևնույն խմբի հետ:
- Եթե հաստատության ներսում կան մեծ դասասենյակներ, այդ դասասենյակները կարող են բաժանվել առանձին փոքր տարածքների՝ յուրաքանչյուրը մինչև 12 երեխա սպասարկելու համար: Եթե սենյակները բաժանվեն, ապա պետք է իրականացվեն հետևյալ նախազգուշական միջոցառումները՝
 - Բաժանարար պատնեշների տեղադրման վայրերում պետք է հաշվի առնվեն հրդեհի, անտանգության և շրջակա միջավայրի կանոնակարգերը:
 - Սենյակների բաժանարարները պետք է ձգվեն հատակից մինչև առաստաղ և պատրաստված լինեն ոչ ծակոտկեն կյուրթից, որպեսզի հնարավոր լինի կանոնավոր կերպով փստահանել:
 - Սենյակի բաժանարարները պետք է տեղադրվեն այնպես, որ առավելագույնի հասցնեն օդափոխությունը և օդի հոսքը՝ թույլատրելու համար առողջ ջերմաստիճանի վերահսկումը և աղտոտիչների հեռացումը:
 - Սենյակի բաժանարարները պետք է ամրագրված լինեն հատակին այնպես, որ նվազագույնի հասցնեն սահելը, ընկնելը:
 - Բաժանվելուց հետո յուրաքանչյուր սենյակ պետք է բավարար տարածություն սահմանի ֆիզիկական հեռավորություն պահպանելու համար (այսինքն՝ երեխաների միջև 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն):
 - Բաժանված դասասենյակները պետք է կազմավորվեն այնպես, որ մինչև 12 երեխաներով խմբերը կարողանան մուտք գործել և դուրս գալ առանց հանդիպելու երկրորդ մինչև 12 երեխաներով խմբին: Եթե դասասենյակն ունի 2 դուռ, ապա խորհուրդ է տրվում, որ յուրաքանչյուր խմբին տրամադրվի առանձին դուռ, որը միայն նրանք կօգտագործեն մուտք գործելիս և դուրս գալիս:
 - Ելքը (սենյակից դուրս գալու միջոց) պետք է հասանելի լինի երեխաների համար բաժանված սենյակի յուրաքանչյուր կողմում: Յուրաքանչյուր տարածք պետք է ունենա շարունակվող և առանց խոչընդոտների ուղի, որը կտանի տվյալ տարածքի ցանկացած կետից դեպի անվտանգ տեղ: Բաժանարարների մոտ կամ դրանց մոտակա տարածքում պետք է տեղադրվեն դեպի ելք տանող ճանապարհների մասին նշաններ և դրանցից օգտվելու կարգը պետք է փորձարկվի տարիանման վարժանքների ժամանակ, որպեսզի ապահովվի անվտանգությունը արտակարգ իրավիճակների ժամանակ:
- Դասասենյակները պետք է դասավորվեն այնպես, որ պահպանվի 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն գործողությունների տեղանքների, սեղանների և աթոռների միջև:
- Խմբային պարապմունքների կամ այլ գործողությունների ժամանակը, որոնց ժամանակ երեխաները միավորվում են, պետք է հասցնել նվազագույնի:
- Պետք է կանխել խաղալիքների և նյութերի համատեղ օգտագործումը:
 - Յուրաքանչյուր երեխա պետք է օգտվի ուսապարկից կամ մեծ Ziplock պայուսակից իր

անձնական պարագաները տեղավորելու համար:

- Յուրաքանչյուր երեխայի պետք է տրամադրել առանձին արկղ կամ տարա իրենց անձնական պարագաների, հագուստի կամ այլ իրերի համար:
- ❑ Զնի/հանգստի ժամին օրորոցները/մահճակալները պետք է տեղադրվեն իրարից 6 ոտնաչափ հեռավորությամբ և ոտք-գլուխ տարբերակով:
 - Եթե հնարավոր չէ ապահովել 6 ոտնաչափ հեռավորություն, ապա օրորոցները/մահճակալները պետք է տեղադրվեն իրարից հնարավորինս հեռու և ոտք-գլուխ տարբերակով:
- ❑ Դասասենյակներում իրականացվող գործողությունները պետք է դասակարգվեն այնպես, որ ձևավորեն և ապահովեն ֆիզիկական հեռավորություն պահպանելը:
 - Անհրաժեշտ է կիրառել միջոցներ, որոնք կօգնեն երեխաներին պատկերացնել մարդկանց միջև անհրաժեշտ 6 ոտնաչափ հեռավորությունը՝ կազմակերպելով խաղեր, որոնք կհիշեցնեն և կոգնորեն երեխաներին միմյանցից պահպանել 6 ոտնաչափ հեռավորություն, կրել դիմակներ, և այլն:
- ❑ Ընդմիջումները և բացօթյա տարածքներում կատարվող գործողությունները պետք է իրականացվեն հերթափոխային տարբերակով, որպեսզի միևնույն ժամանակ 2 խումբ չգտնվի նույն տարածքում:
- ❑ Հնարավորինս պետք է օգտագործել բացօթյա տարածությունը՝ իրար չխառնելով խմբերը՝ դասասենյակներն ընդլայնելու և զբաղմունքների համար ավելի մեծ տարածություն ստեղծելու համար:
- ❑ Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել անհատական զբաղմունքներին՝ ինչպիսիք են գունավորումը, նկարչությունը, գլուխկոտրուկները (պազլ), քառակուսիներով շենքեր կառուցելը, որոնք երեխաները սիրում են անել միայնակ:
 - Անհրաժեշտ է անցկացնել խմբակային պարապմունքներ, որոնք չեն նախատեսում ֆիզիկական շփում (ծափերով խաղեր, պատմություններ պատմել)՝ սոցիալականացումը թույլատրելու համար:

ԴԱՍԱՍԵՆՅԱԿՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ

- ❑ Երեխաների խնամքի գործողությունները՝ հաստատության ներսում կամ դրսում, պետք է իրականացվեն հաստատուն խմբերով՝ 12 կամ ավելի քիչ երեխաներով, որպեսզի պահպանվի ֆիզիկական հեռավորություն երեխաների և երեխաների և անձնակազմի միջև (<<հաստատուն>> նշանակում է միևնույն 12 կամ ավելի քիչ երեխաները միևնույն խմբում ամեն օր):
- ❑ Բոլոր այցելուներից և երեխաներից պահանջվում է կրել դիմակ հաստատության ներսում կամ տարածքում գտնվելիս՝ բացառությամբ քնելիս, ուտելիս/խմելիս կամ միայնակ ֆիզիկական գործողություն կատարելիս (մենակ վազք), երբ չկա այլ անձանց հետ շփման հնարավորություն: Սա վերաբերում է բոլոր մեծահասակներին և 2 տարեկան և բարձր երեխաներին: Դիմակ կրելու պահանջից բացառություն են կազմում միայն այն անձինք, որոնց իրենց բժիշկը կարգադրել է չկրել դիմակ: Ձեր աշխատակիցների և այցելուների անվտանգության ապահովման համար դիմակներ պետք է հասանելի լինեն այն այցելուների համար, որոնք ժամանում են առանց դրանց:
- ❑ Պետք է քայլեր ձեռնարկվեն՝ առավելագույնի հասցնելու անձանց միջև նստատեղերի, դասասեղանների և մահճակալների միջև տարածությունը:
 - Անձնակազմի կողմից ընդմիջումների և ճաշելու համար օգտագործվող տարածքներում չափահաս անձանց միջև հեռավորությունը պետք է հասցնել առավելագույնի: Տե՛ս ստորև նկարագրված միջոցները:
- ❑ Չբաղմունքները պետք է կազմակերպվեն, իսկ գույքը տեղադրվի այնպես, որ անձանց և խմբերի միջև լինի առանձնացված տարածություն:
- ❑ Անձնակազմը պետք է մշակի երեխաների համար հեշտ հասկանալի և նրանց զարգացման համար համապատասխան հրահանգներ՝ օժանդակ միջոցների կիրառմամբ, ինչպիսիք են՝ հատակի գծանշումները և ցուցանակները, երգերը և խաղերը՝տարածությունը առավելագույնի հասցնելու և երեխաների մոտ սերտ շփման վտանգը նվազագույնի հասցնելու համար՝ ինչպես ներսի, այնպես էլ դրսի տարածքներում:

- ❑ Սահմանափակումներ պետք է դրվեն ոչ կարևոր այցելուների, կամավորների և միաժամանակ մի քանի խմբեր ներգրավող գործողությունների վրա:
- ❑ Հնարավորության դեպքում պետք է սահմանափակվի հանրային գործունեությունը: Եթե դա հնարավոր չէ, ապա տարածության օգտագործումը պետք է լինի հերթափոխով, այդտեղ գտնվող անձինք պետք է իրարից առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեն, իսկ խմբերը պետք է հնարավորինս փոքր և հաստատուն լինեն: Ընդհանուր օգտագործվող տարածքները պետք է ախտահանվեն օգտագործվելուց առաջ և հետո:
- ❑ Մշտապես ֆիզիկական հեռավորություն պահպանելու համար պետք է օգտագործվեն այլընտրանքային տարածքներ: Կարող են օգտագործվել օրինակ, բացօթյա տարածքները, ճաշելու տարածքները, որպեսզի երեխաների ակտիվության ժամերին ֆիզիկական հեռավորություն պահպանելու հնարավորություն լինի:
- ❑ Խմբակային շարժը պետք է հնարավորինս նվազագույնի հասցնել: Օրինակ՝ ժամանումներն ու մեկնումները պետք է դասավորվեն այնպես, որ ծնողների և երեխաների կուտակումներ չլինեն:
- ❑ Երեխաների ներգրավմամբ հիմնական գործողություններ պետք է իրականացվեն բացօթյա տարածքներում (ֆիթնեսին առնչվող բոլոր գործողությունները, երգը և երգեցողությունը պետք է կատարվեն միայն բացօթյա տարածքներում):

ՃԱՇԵԼ

- ❑ Ծնողներին պետք է հորդորել հնարավորության դեպքում երեխաների հետ ուղարկել իրենց ճաշը:
- ❑ Երեխաների ճաշելու ժամանակ պետք է պահպանել ֆիզիկական հեռավորություն:
- ❑ Ճաշի ժամերը պետք է դասակարգվեն այնպես, որ երեխաների յուրաքանչյուր խումբ ճաշի մյուս խմբից առանձին: Պետք է խուսափել ճաշարանի ընդհանուր տարածքից օգտվելուց: Պետք է ապահովել սննդից ալերգիա ունեցող երեխաների անվտանգությունը:
- ❑ Անձնակազմի ճաշի ժամերը և ընդմիջումները պետք է սահմանվեն այնպես, որ հնարավոր լինի առավելագույնս հեռավորություն պահպանել միմյանցից՝ մինչդեռ նրանք կարող են հանել դիմակները ուտելու համար՝ պահպանելով Առողջապահության Գրասենյակի Հրամանը, որն արգելում է մեկից ավելի ընտանիքի անդամների հավաքները:
 - Անձնակազմի կողմից որպես ճաշելու կամ ընդմիջման տարածք օգտագործվող վայրերում նրանց գտնվելը պետք է նվազեցվի, իսկ նրանց միջև տարածությունը պետք է հասցվի առավելագույնի: Դա պետք է իրականացվի հետևյալ կերպ՝
 - Ճաշելու և ընդմիջումների համար օգտագործվող տարածքներում անձանց միջև պետք է պահպանվի վեց ոտնաչափ հեռավորությանը համարժեք տարածություն
 - Ճաշի և ընդմիջումների ժամերը պետք է կանոնակարգվեն այնպես, որ նվազեցնեն այդ սենյակներում կամ տարածքներում գտնվող անձանց քանակը
 - Սեղանները պետք է դրվեն իրարից վեց ոտնաչափ հեռավորության վրա և ապահովվեն վեց ոտնաչափ հեռավորությունը ստատեղերի միջև, անձանց թիվը նվազեցնելու համար անհրաժեշտ է հեռացնել կամ ամրացնել ստատեղերը, հատակին պետք է լինեն գծանշաններ՝ հեռավորությունը ապահովելու համար, իսկ ստատեղերը պետք է այնպես տեղադրված լինեն, որ նվազագույնի հասցնեն անձնական շփումը: Խրախուսվում է միջնապատերի տեղադրումը հետագայում վարակի տարածումը կանխելու համար, սակայն այն չպետք է դիտարկվի որպես անձանց թվի նվազեցմանը կամ ֆիզիկական (սոցիալական) հեռավորության պահպանմանը փոխարինող միջոց:
- ❑ Անհրաժեշտ է օգտվել մեկանգամյա օգտագործման պարագաներից (օրինակ՝ սպասքի պարագաներ և ափսեներ): Եթե հանարավոր չէ օգտվել մեկանգամյա օգտագործման պարագաներից, ապա ոչ-մեկանգամյա օգտագործման բոլոր պարագաները պետք է օգտագործվեն ձեռնոցներով և լվացվեն սպասք լվանալու օճառով և տաք ջրով կամ սպասք լվացող մեքենայի մեջ: Անհատները պետք է լվանան իրենց ձեռքերը ձեռնոցները հանելուց կամ օգտագործված սննդի պարագաներին անմիջապես դիպչելուց հետո:

- ❑ Եթե որևէ միջոցառման ժամանակ առաջարկվում է սնունդ, ապա ճաշարանի կամ ընտանեկան ճաշի փոխարեն յուրաքանչյուր ներկա անձին պետք է սնունդը տրամադրել նախապես փաթեթավորված տուփերով կամ պայուսակներով: Խուսափեք ուտելիքների և սպասքի համատեղ օգտագործումից:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Անձնակազմի բոլոր անդամները և ընտանիքները պետք է տեղեկացված լինեն ուժեղացված սանիտարական պրակտիկային, ֆիզիկական հեռավորություն պահպանելու ուղեցույցներին և դրանց կարևորությանը, պատշաճ օգտագործման պայմաններին, դիմակները հանելու և լվանալու կարգին, ախտանիշների ստուգման պրակտիկային և COVID-19-ի բացառման չափանիշներին:
 - Անձնակազմը պետք է ցուցանակների միջոցով առանձնահատուկ կերպով տեղեկացված լինի և հիշեցվի համատեղ ճաշելու և ընդմիջումների վտանգի մասին: Անձնակազմի անդամները պետք է տեղեկացված լինեն հաստատությունից դուրս գտնվելիս ընթացիկ ուղեցույցներին հետևելու կարևորության մասին, որպեսզի աշխատավայրում պահպանեն անվտանգություն:
- ❑ Անձնակազմից պետք է նշանակվի մեկ անդամ, որը պատասխանատու կլինի COVID-19-ին վերաբերող հարցերին արձագանքելու համար: Երեխաների ինամքով զբաղվող անձնակազմը և ընտանիքները պետք է ճանաչեն այդ մարդուն և կարողանան կապ հաստատել նրա հետ: Այդ անձնավորությունը պետք է վերապատրաստված լինի՝ փաստաթղթերը համակարգելու և հնարավոր վարակին հետևելու համար, որպեսզի շատ արագ և պատասխանատու կերպով տեղեկացնի այդ մասին անձնակազմին և ընտանիքներին: Այդ անձը պատասխանատու պետք է լինի նաև հաստատության ներսում բոլոր COVID-19-ի դեպքերի մասին տեղային առողջապահական մարմիններին տեղեկացնելու համար:
- ❑ Առողջ հիգիենայի պահպանման համար պետք է հասանելի լինեն համապատասխան պարագաներ:
 - Այդ պարագաները ներառում են՝ օճառ, անձեռոցիկներ, առանց հպման աղբարկղեր և առնվազն 70 տոկոս էթիլային սպիրտ պարունակող ձեռքերի ախտահանիչ միջոցներ անձնակազմի համար և ձեռքերի ախտահանիչ միջոցներ այն երեխաների համար, որոնք կարող են անվտանգ կերպով օգտվել դրանցից:
- ❑ Երեխաներին պետք է սովորեցնել հետևյալ պաշտպանիչ միջոցառումները՝
 - Ուտելուց առաջ և հետո, հազալուց կամ փռշտալուց հետո, դրսից ներս գալուց և զուգարանից օգտվելուց հետո կանոնավոր կերպով լվալ ձեռքերը:
 - Խուսափել աչքերին, քթին և բերանին դիպչելուց:
 - Ձեռքով ծածկել բերանը հազալիս և փռշտալիս:
 - Զիջել մաքրել անձեռոցիկով կամ հազալիս/փռշտալիս բերանը ծածկել անձեռոցիկով կամ արմուկով:
- ❑ Անհրաժեշտ է սահմանել օրակարգ, որը հնարավորություն կտա անձնակազմին և երեխաներին պարբերաբար լվանալ ձեռքերը հերթափոխային ընդմիջումներով:
- ❑ Երեխաներին և անձնակազմին պետք է կարգադրել լվանալ իրենց ձեռքերը օճառը քսելուց հետո 20 վայրկյան տրորելով, այնուհետև թղթե սրբիչով (կամ մեկանգամյա օգտագործման կտորե սրբիչով) լավ չորացնել:
- ❑ Անձնակազմի անդամները պետք է կազմակերպեն և ցուցադրեն ձեռքերի լվացման կարգը: Օրինակ՝ փոքր երեխաների համար զուգարանից օգտվելու ժամանակը պետք է օգտագործվի որպես առողջ սովորությունների ամրապնդման և ձեռքերը պատշաճ լվանալ սովորելու հնարավորություն:
- ❑ Եթե ձեռքերը լվանալ հնարավոր չէ, ապա երեխաները և անձնակազմի անդամները պետք է օգտվեն ձեռքերի ախտահանիչ միջոցից: Ախտահանիչ միջոցը պետք է տրորել ձեռքերի վրա այնքան ժամանակ, քանի դեռ ամբողջովին չի ներծծվել մաշկի կողմից: Նկատի ունեցեք, որ ձեռքերի կանոնավոր լվացումն ավելի արդյունավետ է, քան ձեռքերի ախտահանիչ միջոցներ օգտագործելը՝ հատկապես, երբ ձեռքերը տեսանելիորեն կեղտոտ են
 - 9 տարեկանից փոքր երեխաները պետք է օգտագործեն ձեռքերի ախտահանիչ միջոցները

մեծահասակների հսկողությամբ: Չանգահարեք Թունավորումների Վերահսկման կենտրոն հետևյալ հեռախոսահամարով՝ 1-800-222-1222, եթե երեխաները կույ են տվել ձեռքերի ախտահանիչ միջոցը: Եթե կա հնարավորություն, որ երեխաները կարող են գտնվել առանց վերահսկողության, ապա պետք է օգտագործել Էթիլային սպիրտի հիմքով ախտահանիչներ: Իզոպրոպիլ պարունակող ախտահանիչներն ավելի թունավոր են և կարող են ներծծվել մաշկի կողմից: Մի՛ օգտագործեք մեթանոլ պարունակող արտադրանքներ:

- ❑ Հնարավորության սահմաններում ամբողջ հաստատության տարածքում պետք է տեղադրվեն ձեռքերի լվացման շարժական կայաններ՝ զուգարաններում շարժը և կուտակումները նվազեցնելու համար:
- ❑ Ցայտադրյալների օգտագործումը պետք է դադարեցվի, դրանց փոխարեն խրախուսվում է օգտագործել անձնական, բազմակի օգտագործման շշեր:
- ❑ Հաճախակի համան մակերեսները՝ ինչպես օրինակ դռների բռնակները, անջատիչները, լվացարանների բռնակները, զուգարանի մակերեսները, սեղանները, ինչպես նաև փոխադրամիջոցների մակերեսները պետք է մաքրվեն օրական առնվազն մեկ անգամ կամ, հնարավորության դեպքում, ավելի հաճախ:
- ❑ Խաղահրապարակների սարքավորումների համատեղ օգտագործումը պետք է սահմանափակվի այնպիսի ֆիզիկական գործողություններով, որոնք պահանջում են մակերեսների հետ ավելի քիչ շփում: Եթե տարածքները համատեղ են օգտագործվում, ապա դրանք պետք է մաքրվեն օգտագործումից առաջ և հետո:
- ❑ Առարկաների և սարքերի համատեղ օգտագործումը՝ ինչպիսիք են խաղալիքները, խաղային և արվեստի պարագաները, պետք է մաքրվեն և ախտահանվեն օգտագործվելուց առաջ և հետո:
- ❑ Անհրաժեշտ է խուսափել խաղալիքների և մանիպուլյատիվ միջոցների համատեղ օգտագործումից:
 - Ամբողջ օրվա ընթացքում պետք է օգտագործվեն այնպիսի խաղալիքներ և մանիպուլյատիվ միջոցներ, որոնք հեշտ են մաքրվում և ախտահանվում
 - Կամ յուրաքանչյուր երեխա պետք է ունենա խաղալիքների պիտակավորված զամբյուղ
 - Դժվար մաքրվող խաղալիքները (օր.՝ փափուկ խաղալիքները) կամ պետք է հեռացվեն դասասենյակից, կամ զգուշությամբ պետք է օգտագործվեն երեխաների կողմից՝ անհատապես:
- ❑ Մաքրող միջոցներ ընտրելիս պետք է ընտրել այն արտադրանքները, որոնք հաստատված են EPA-ի <<N/N>> ցանկի կողմից՝ որպես COVID-19-ի դեմ արդյունավետ միջոցներ և պետք է հետևել հրահանգներին: Այդ արտադրանքները պարունակում են բաղադրիչներ, որոնք ավելի ապահով են ասթմա ունեցող անձանց համար:
- ❑ Պետք է ընտրվեն այնպիսի ախտահանիչներ, որոնք պիտակավորված են որպես զարգացող վիրուսային պաթոգենների դեմ արդյունավետ միջոցներ և անհրաժեշտ է հետևել այդ ախտահանիչների հրահանգներին, որոնք վերաբերում են վիրուսի զարգացման արագությանը և շփման ժամանակին: Աշխատակիցները պետք է վերապատրաստվեն քիմիական նյութերի հետ կապված վտանգների համար՝ ծանոթանալով արտադրողի հրահանգներին և դրանց անվտանգ օգտագործման Cal/OSHA պահանջներին ([CAL OSHA Ախտահանիչների Անվտանգ Օգտագործում](#)):
- ❑ Հաստատությունը մաքրելու և ախտահանելու համար պատասխանատու պահակները կամ անձնակազմի անդամները պետք է ապահովված լինեն համապատասխան Անձնական Պաշտպանության Սարքավորումներով՝ ներառյալ ձեռնոցները, աչքերի պաշտպանության միջոցները, շնչառական պաշտպանիչ միջոցները և արտադրանքի ցուցումներով նախատեսված այլ պաշտած միջոցները: Բոլոր արտադրանքները պետք է պահվեն երեխաներից հեռու և նրանց համար սահմանափակ հասանելիությամբ տարածքներում:
- ❑ Մաքրված տարածքները պետք է օդափոխվեն մինչև երեխաների ժամանումը, իսկ երեխաների բացակայության դեպքում պետք է կատարվի մանրակրկիտ մաքրում: Օդափոխիչները պետք է օգտագործվեն մաքուր օդ ապահովելու համար: Օդի զտիչները և գտման (ֆիլտրային) համակարգերը պետք է ստուգվեն կանոնավոր կերպով և փոխարինվեն ըստ անհրաժեշտության, որպեսզի ապահովվեն օդի օպտիմալ որակը:
- ❑ Եթե պատուհաններ բացելը կարող է առողջության տեսանկյունից անվտանգ չլինել, ապա պետք է կիրառվեն այլընտրանքային տարբերակներ, որոնք կբարելավեն օդի հոսքը, ինչպես օրինակ HVAC

համակարգերի կողմից կենտրոնական օդի զտումը առավելագույնի հասցնելը (զտման նվազագույն ցուցանիշը՝ MERV 13).

- ❑ Քայլեր պետք է ձեռնարկվեն ապահովելու, որպեսզի ջրամատակարարման բոլոր համակարգերը և սարքավորումները (օրինակ՝ շատրվաններ, դեկորատիվ շատրվաններ) երկարատև դադարից հետո ապահով լինեն օգտագործման համար՝ նվազեցնելու՝ օրինակ Լեգիոներական վարակի վտանգը:

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՆՏԱՆԻՇՆԵՐԻ ԱՏՈՒԳՈՒՄ

- ❑ Անձնակազմի կողմից ժամանման պահին կատարվող ստուգումներին զուգահեռ հաստատություն ժամանելիս ստուգվում են նաև բոլոր երեխաների ախտանիշները՝
 - Ստուգումները ներառում են ժամանման պահին երեխաների առողջական վիճակի տեսողական ստուգում, որը կարող է ներառել յուրաքանչյուր օրվա սկզբին երեխաների ջերմաչափում անհպում ջերմաչափի միջոցով: Եթե անհպում ջերմաչափներ հասանելի չեն, ապա ընդունվում է ջերմության մասին երեխայի կողմից հայտնած տեղեկությունը:
 - Նախքան կրթական հաստատություն մուտք գործելը կամ հաստատության տարածքում գտնվելիս դրական ախտանիշներ ունեցող անձանց համար հաստատությունը պետք է հետևի Հանրային Առողջապահության Վարչության [Որոշումների](#) ուղեցույցին: Բոլոր անձանցից տեղեկացրեք վերջին 24 ժամվա ընթացքում նրանց ախտանիշների մասին և՛ արդյոք նրանց տան անդամներից որևէ մեկը վարակված է COVID-19-ով: Պետք է իրականացվեն նաև ախտանիշների ստուգումներ նախքան այցելուները կկարողանան մուտք գործել հաստատություն: Ստուգումները պետք է ներառեն հնարավոր COVID-19-ի վարակին համահունչ ախտանիշների ստուգումներ, որոնք թվարկված են Որոշումներում: Այդ ստուգումները կարող են կատարվել անձնապես կամ այլընտրանքային տարբերակներով ինչպիսիք են՝ առցանց ստուգումները կամ հաստատության մուտքի մոտ [ցուցանակներ](#) փակցնելը, որոնք կտեղեկացնեն այցելուներին, թե ինչպիսի ախտանիշների դեպքում նրանք չեն կարող մուտք գործել հաստատություն:
- ❑ Ցանկացած երեխա, ծնող, խնամակալ կամ անձնակազմի անդամ, որի մոտ ի հայտ են գալիս COVID-19-ի հնարավոր վարակին համահունչ ախտանիշներ, պետք է հեռացվի հաստատությունից: Անձնակազմի անդամների և երեխաների ախտանիշները պետք է ստուգվեն օրվա ընթացքում՝ հիվանդության համար, COVID-19-ի հնարավոր վարակին համահունչ ախտանիշներ ունեցող երեխաներին և անձնակազմի անդամներին պետք է ուղարկել տուն կամ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան բժշկական հաստատություն:
- ❑ Անձնակազմի անդամները, երեխաները և ընտանիքները պետք է տեղեկացված լինեն, թե երբ պետք է մնան տանը և երբ կարող են վերադառնալ երեխաների խնամքի հաստատություն: Անձնակազմի անդամներին կամ երեխաներին, որոնք հիվանդ են, կամ վերջերս սերտ շփում են ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ, պետք է հրահանգել մնալ տանը:
- ❑ Անձնակազմի անդամները և երեխաները պետք է տեղեկացված լինեն բռնկումների վտանգների, ինչպես նաև անվտանգության պրակտիկայի պահպանման կարևորության մասին՝ այդ թվում նույն ընտանիքից, աշխատանքից դուրս հավաքներից խուսափելու մասին: Երեխաները պետք է ստանան իրենց տարիքին համարժեք ուսուցում՝ կապված վտանգների և վտանգներից խուսափելու լավագույն փորձի մասին:

ԵԹԵ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԿԱՍ ԵՐԵՒԱՆԵՐԸ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ԵՆ

- ❑ Անհրաժեշտ է սահմանել մեկուսացման սենյակ կամ տարածք, որպեսզի ցանկացած անձի կողմից COVID-19-ի ախտանիշներ դրսևորելու դեպքում հնարավոր լինի անհապաղ մեկուսացնել նրան:
- ❑ **24 ամսականից** բարձր երեխաները, որոնք չունեն դիմակ կրելու և հանելու կամ դիմակով շնչելու դժվարություններ պետք է կրեն կտորե դիմակներ կամ վիրաբուժական դիմակներ:
- ❑ Ցանկացած երեխա կամ անձնակազմի անդամ, որի մոտ ի հայտ են գալիս ախտանիշներ, պետք է հնարավորինս շուտ տեղափոխվի մեկուսացման սենյակ մինչև կտեղափոխվի տուն կամ առողջապահական հաստատություն:
- ❑ Համապատասխան գործընթացներ պետք է իրականացվեն հիվանդ անձին տուն կամ



առողջապահական հաստատություն ապահով կերպով տեղափոխելու համար: Առանց հապաղման գանգահարեք 9-1-1, եթե անձի մոտ առկա է ցավ կամ ճնշում կրծքավանդակում, խառնաշփոթություն, կապտած շրթուկներ կամ դեմք:

- ❑ Հաստատությունը պետք է ունենա յուրաքանչյուր երեխայի կամ անձնակազմի անդամի առնվազն մեկ, սակայն ցանկալի է մեկից ավել, կոնտակտային հեռախոսահամար՝ արտակարգ իրավիճակների դեպքում հնարավորինս արագ նրանց տեղեկացնելու անձնակազմի անդամի կամ երեխայի մոտ հիվանդության նշանների ի հայտ գալու մասին:
- ❑ Անձնակազմի հիվանդ անդամներին կամ հիվանդ երեխաների ծնողներին պետք է հորդորել չվերադառնալ հաստատություն քանի դեռ նրանք չեն համապատասխանում ախտանիշներ ունեցող անձանց համար կրթական հաստատություն վերադառնալու համար [Որոշումներում](#) ներառված չափորոշիչներին:
- ❑ Անձնակազմի անդամները, երեխաները կամ ծնողները, ովքեր սերտ շփում են ունեցել վարակված անձի հետ պետք է մասն տանը քանի դեռ նրանք չեն համապատասխանում հնարավոր վարակված երեխայի հետ շփում ունեցող անձանց համար կրթական հաստատություն վերադառնալու համար [Որոշումներում](#) ներառված չափորոշիչներին:
- ❑ Տեղեկանալով այն մասին, որ անձնակազմի անդամի կամ երեխայի COVID-19 - ի թեստի պատասխանը դրական է, հաստատությունը պետք է վարակված անձանց կարգադրի մեկուսանալ տանը, իսկ վարակված անձի հետ շփված բոլոր անձանց պետք է կազմադրել կարանտին պահպանել: Մինչև նույն ժամանակ, եթե վարակումը տեղի է ունեցել խմբում կամ դասասենյակում, ամբողջ անձնակազմը և երեխաները, որոնք վարակման պահին ներկա են եղել այդտեղ, համարվում են վարակված: Տե՛ս հանրային առողջապահության մեկուսացման (ph.lacounty.gov/covidisolation) և կարանտին պահպանելու (ph.lacounty.gov/covidquarantine) ուղեցույցները լրացուցիչ մանրամասների համար:
- ❑ Հաստատություններից պահանջվում է Հանրային Առողջապահության Վարչությանը տեղեկացնել աշխատակիցների և աշակերտների շրջանում COVID-19-ով վարակվելու բոլոր հաստատված դեպքերի մասին, ովքեր հիվանդանալու են նախորդող 14 օրերի ընթացքում գտնվել են հաստատության ցանկացած վայրում: Հիվանդության մեկնարկային օրը համարվում է COVID-19-ի թեստ հանձնելու օրը կամ վարակված անձի մոտ Ախտանիշների Դրսևորման Օրը՝ կախված նրանից, թե որն է ավելի շուտ տեղի ունեցել: 1 կամ 2 հաստատված դեպքերի մասին պետք է հայտնել՝ լրացնելով [COVID-19-ով Վարակված Անձանց և Նրանց Կոնտակտավորների Ցանկը Կրթական Ոլորտի համար](#) և ուղարկելով այն հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ ACDC-Education@ph.lacounty.gov դեպքի մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:
- ❑ Այն դեպքում, եթե աշխատավայրում 14 օրերի ընթացքում հայտնաբերվում են COVID-19-ով վարակման 3 կամ ավելի դեպքեր, հաստատությունը պետք է այդ խմբակային դեպքի մասին անհապաղ տեղեկացնի Հանրային Առողջապահության Վարչությանը՝ հաղորդագրություն ուղարկելով հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ ACDC-Education@ph.lacounty.gov, կամ գանգահարելով հետևյալ հեռախոսահամարներով՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821
- ❑ Հիվանդ անձի կողմից օգտագործված տարածքները պետք է փակվեն մինչև մաքրվելը և ախտահանվելը: Հաստատությունը պետք է սպասի 24 ժամ մինչև մաքրելը և ախտահանելը: Եթե հնարավոր չէ սպասել 24 ժամ, ապա պետք է սպասել այնքան երկար, որքան հնարավոր է:
- ❑ Հաստատությունը պետք է ապահովի ախտահանիչների անվտանգ և ճիշտ կիրառումը՝ անձնական պաշտպանիչ սարքերի օգտագործմամբ և մաքրման համար անհրաժեշտ օդափոխության ապահովմամբ: Մաքրող միջոցները և ախտահանիչները պետք է հեռու լինեն երեխաներից:
- ❑ Հաստատությունը տեղեկացված է այն մասին, որ բռնկման կամ վարակման մեծ ծավալի դեպքում հանրային առողջապահության վարչության տեղային մարմնի հետ խորհրդակցելուց հետո, երեխաների խնամքն ապահովող համապատասխան աղմինիստրատորը կարող է դիտարկել հաստատության փակվելու և փակման ժամանակի արդարացված լինելու հարցը՝ կախված համայնքին հատուկ վտանգի աստիճանից՝
 - Եթե ծրագիրը փակվի, անձնակազմը, աշակերտները և նրանց ընտանիքները չպետք է ծրագրեն հավաքվելու համար այլընտրանքային պայմանավորվածություններ:



ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿՈՒՄ

- Յուրաքանչյուր երեխայի պարագաները պետք է առանձնացվեն և պահվեն անհատապես պիտակավորված տարաներում, արկղերում կամ տարածքներում: Երեխաների իրերը պետք է ամեն օր տարվեն տուն՝ դրանք մաքրելու և ախտահանելու համար:
- Պետք է ապահովվի դասասենյակի պարագաների պատշաճ քանակ, որպեսզի նվազեցվի հաճախակի հպման պարագաների օգտագործումը (արվեստի գործիքներ, սարքավորումներ, և այլն)՝ ըստ հնարավորության: Եթե իրերի քանակը սահմանափակ է, ապա դրանք պետք է օգտագործվեն մի խմբի կողմից միաժամանակ, այնուհետև պետք է մաքրվեն և ախտահանվեն մինչև մյուս խմբի կողմից օգտագործվելը և դրանից հետո:
- Անհրաժեշտ է հնարավորինս խուսափել Էլեկտրոնային սարքերի, հագուստի, խաղալիքների, գրքերի և այլ խաղերի կամ ուսումնական նյութերի համատեղ օգտագործումից:

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Պետք է հիմնադրվեն հաղորդակցության համակարգեր, որոնք հնարավորություն կտան անձնակազմին և ընտանիքներին ինքնուրույն հայտնելու իրենց ախտանիշների մասին և ստանալու արագ ծանուցումներ վարակման դեպքերի վերաբերյալ՝ միաժամանակ պահպանելով գաղտնիությունը:
- Սույն արձանագրության պատճենը պետք է փակցվի հաստատության բոլոր հանրային մուտքերում:
- Հաստատության ամբողջ տարածքում պետք է տեղադրվեն նշաններ, որոնք ուսուցիչներին և աշակերտներին կհիշեցնեն ֆիզիկական հեռավորություն պահպանելու և դիմակներ կրելու մասին:
- Պետք է տեղադրվեն ցուցանակներ, որոնք այցելուներին կկարգադրեն մալ տանը, եթե հիվադ են շնչառական ախտանիշներով:
 - Հաստատության ինտերնետային կայքերը (վեբ կայք, սոցիալական ցանց, և այլն) պետք է հստակ տեղեկատվություն տրամադրեն ֆիզիկական հեռավորության պահպանման, դիմակներ կրելու և այլ հարցերի մասին:

E. ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Երեխաների համար կարևոր ծառայությունները պետք է առաջնահերթություն ստանան:
- Միջոցառումներ են ներդրվել՝ ապահովելու շարժունակություն ունեցող և/կամ հանրային վայրերում վտանգի տակ գտնվող երեխաներին ծառայություններ տրամադրելու համար:

Վերևում չընդգրկված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է թվարկվի առանձին էջերի վրա, որը բիզնեսը պետք է կցի այս փաստաթղթին:

Սույն արձանագրության վերաբերյալ ցանկացած հարցի դեպքում կարող եք կապ հաստատել հետևյալ անձի հետ՝

Բիզնեսի Կոնտակտային Անձի անունը՝

Հեռախոսահամարը՝

Վերջին վերանայման ամսաթիվը՝
